

ԽԱՉԻԿ ՎՐԴ. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ՔԱՐՈԶ

(30 հուլիս, 1989 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Որովհետև Աստուած այնքան կսիրեր աշխարհ, որ Իր Միածին Որդին ղրկեց աշխարհ փրկելու համար»:

«Քրիստոս աշխարհ եկաւ ոչ թե աշխարհի մարդոց դատապարտելու, այլ աշխարհ փրկելու»:

Հովհաննու ավետարանեն առնված այս տողերը մեր աչքին առջև աքանչելի կերպով կպատկերացնեն Քրիստոսի այս աշխարհի վրա կատարած առաքելությունը: Քրիստոս աշխարհ եկաւ, որպեսզի մարդոց առաջնորդե դեպի Աստված: Ծննդոց գիրքը մեր աչքին առջև գեղեցիկ կերպով կներկայացնե աշխարհի ստեղծագործության պատմությունը, և այնտեղ կպատմվի, թե ի՞նչպես Աստված աշխարհ ստեղծեց, և մանավանդ ի՞նչպես Աստված մարդը ստեղծեց: Եվ այնտեղ կրսե, թե Աստված մարդը Իր պատկերի նման ստեղծեց: Եվ սակայն դժբախտաբար, մեղքը, Աստուծո չհնազանդիլը մարդը հեռացուց դրախտեն, մարդը հեռացուց Աստուծո պատկերեն: Եվ անավասիկ Քրիստոս աշխարհ կուգար, ծնունդ կառներ, որպեսզի մարդոց մեջ կրկին անգամ վերականգնացնե Աստուծո պատկերը, որպեսզի մարդոց առաջնորդե դեպի Աստված: Այս է Քրիստոսի առաքելությունը: Եվ Քրիստոս այս առաքելությունը փոխանցեց Իր շատ սիրելի աշակերտներուն՝ առաքյալներուն: Եվ առաքյալներ իրենց կարգին այդ առաքելության փորձը փոխանցեցին եկեղեցվո, որ Քրիստոսի ներկայությունն է այս աշխարհի վրա: Ուրեմն եկեղեցվո առաքելությունը հիմնված է Քրիստոսի առաքելության վրա, որ կնշանակե, թե եկեղեցին կշարունակե փրկագործության գործը մարդոց մեջ: Առանց առաքելության եկեղեցին գոյություն չունի, քանի որ առաքելությունը եկեղեցվո սիրտն է, եկեղեցվո ջանքն է, ինչպես որ մարդը առանց սրտի գոյություն չի ունենար այլևս այս աշխարհի վրա ապրելեն, այնպես էլ եկեղեցին առանց առաքելության աշխատանքի ու գործունեության կդադրի գործունեություն ունենալն: Եվ մեր եկեղեցիները, և մեր տաճարները աքանչելի կդառնան միայն պատմական կոթողներ, ոչ կենդանի իրականություններ:

Մայիս ամսվա ընթացքին Ամերիկայի Միացյալ նահանգներու Թեքսաս նահանգի Սան Անտոնիո քաղաքի մեջ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդը համաշխարհային ժողով մը կազմակերպած էր: Եվ աշխարհի վրա գտնվող բոլոր քրիստոնյա եկեղեցիները այնտեղ ներկա էին: Հայ Եկեղեցին ևս Ս. Էջմիածնի Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոսի գլխավորությամբ այնտեղ Սան Անտոնիո քաղաքի մեջ ներկա էր իր վեց ներկայացուցիչներով: Եվ սրբազան հայրը Ամենայն Հայոց Հայրապետի՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Սրբազնագոյն Կաթողիկոս-Պատրիարքի անունով բոլոր եկեղեցիներուն, համայն քրիստոնյա եկեղեցիներուն շնորհակալություն հայտնեց համայն հայ ժողովուրդի կողմե, որ երկրաշարժի այդ սարսափելի օրերուն ընթացքին ամբողջ քրիստոնյա աշխարհը հայ ժողովուրդի կողքին կանգնեցավ. բոլոր քրիստոնյա համայնքները, թե նյութապես

և մանավանդ բարոյապես հայ ժողովուրդի ցավը լացին: Սան Անտոնիոյի մեջ գումարված այդ ժողովի ընթացքին եկեղեցիներու ներկայացուցիչներ խոսեցան, վիճաբանեցան եկեղեցվո առաքելության գործի կապակցությամբ: Անոնք խոսեցան, թե այսօրվա մեր աշխարհին մեջ մարդիկ, հավատացյալներ ի՞նչ ձևի դժվարություններ ունին, թե մարդիկ այսօր աշխարհի ամեն կողմերու մեջ կտառապին ներքնապես: Անոնք ունին ներքին աշխարհի կոիվը իրենց հավատքի կապակցությամբ և կամ իրենց հանդեպ ունեցած հարաբերության կապակցությամբ: Եվ եկեղեցիներու ներկայացուցիչներ խոսեցան, ուզեցին գտնել միջոցներ, որպեսզի մարդոց, հավատացյալներուն կարենան օգնել անոնց հոգեպես զորացնելու, անոնց մեջ հավատքը ավելի ամրապնդելու համար: Հայ Եկեղեցվո ներկայացուցիչներ ևս խոսեցան ներկա հայ համայնքներու, հայ ժողովուրդի խնդիրներուն և ցավերուն մասին: Մենք խոսեցանք Ղարաբաղի հարցի մասին: Մենք այնտեղ եկեղեցիներու ներկայացուցիչներուն ըսինք, թե ինչո՞ւ համար հայը Ղարաբաղի իրավունքները կպահանջե, և այդ իրավունքները հայ ժողովուրդի արդար իրավունքներն են: Մենք խոսեցանք երկրաշարժեն վեր հայ ժողովուրդի ունեցած նյութական և մանավանդ հոգեբանական դժվարություններուն մասին: Եվ նաև խոսեցանք 1915-ին պատահած ջարդի մասին, թե ինչպես 1,5 միլիոն հայեր ջարդվեցան թուրքերու կողմե: Եվ այնտեղ բոլոր եկեղեցիներու ներկայացուցիչներ հետևյալը ընդունեցին, թե գալ տարի՝ 75-ամյակի առթիվ բոլոր աշխարհի եկեղեցիները պիտի հիշատակեն: Եղեռնի հայ նահատակներու հիշատակը: Թե անոնք իրենց կառավարություններեն պիտի պահանջեն, որ հարց բարձրացնեն Թուրքիո առջև, որպեսզի Եկեղեցիներու Համաշխարհային Կենտրոնի կողմե կազմակերպված հանձնախումբ մը երթա պատմական Հայաստան, մեր գրավված Հայաստանը և այնտեղ քննարկե մեր փլած, ավերակ դարձած եկեղեցիներու և վանքերու վիճակը: Այս սքանչելի մեկ երևույթ մըն է: Այս եկեղեցվո առաքելության հետ կապ ունեցող գործունեություն մըն է: Եվ բոլոր եկեղեցիներու ներկայացուցիչները խոստացան իրենցմե պահանջվածը ներկայացնել պետք եղած տեղերը: Մենք նաև խոսեցանք Հայ Եկեղեցվո առաքելության դերի մասին անցյալի մեջ: Պատմեցինք, թե ինչպես Հայ Եկեղեցին առաքելական դարեներեն սկսյալ եղած է հայու հոգին, հայու հավատքը և մանավանդ հայու կյանքը: Հայ Եկեղեցին եղած է հայու բերդը, որ դարերու ընթացքին կրցած է հայը հայ պահել, կրցած է հայուն տալ շունչը, ոգին հայկականության: Եվ մանավանդ 5-րդ դարու սկիզբը, երբ Ս. Մեսրոպ Մաշտոց հայ գիրերը գտավ, այդ օրեն սկսյալ քրիստոնեությունը հայացավ, երբ Աստվածաշունչը հայերենի թարգմանվեցավ, երբ սկսանք մեր եկեղեցիներու մեջ հայերեն շարականներ երգել, հայերեն աղոթքներ արտասանել, այդ օրեն սկսյալ քրիստոնեությունը մեր ժողովուրդին մեջ հայացավ և դարերու ընթացքին այդ հավատքը, հայ քրիստոնեական հավատքը մեզի կրցավ ամուր պահել: Մեր հայրերը, մեր հայրապետները, մեր վարդապետները կրցան իրենց առաքելությունը կատարել, կրցան Քրիստոսի առաքելության գործը իրենք շարունակել փրկությանը հասնելու մեր ժողովուրդին: Սքանչելի երևույթ մըն է, երբ Եղիշեի պատմության մեջ կկարդանք Վարդանանց պատերազմը: Թշնամին ուզեց հայը բաժնել իր հավատքեն, հայը հեռացնել իր եկեղեցիեն: Եվ սակայն մեր ժողովուրդը շատ հստակ կերպով ըսավ, թե մեր հավատքը, մեր քրիստոնեական հավատքը մեր ինքնության մասն է: Մեր եկեղեցին կրցած է շարունակել իր առաքելությունը, մեր ժողովուրդին տալով ույժը՝ դիմագրավելու ամեն տեսակ դժբախտություններու, ամեն տեսակ դժվարություններու: Այսօր արտասահմանի տարածքին վրա ուր որ հայեր գացած են, շինած են իրենց եկեղեցին, հայ հավատքի տունը և անոնք հավատարիմ են հայ ժողովուրդի հավատքին, հավատարիմ են Ս. Էջմիածնի հավատքին, Լուսավորչի հավատքին: Ամենայն Հայոց Հայրապետի, մեր սիրելի հոր, Վազգեն Ա Կաթողիկոսի աշխատանքներով և ջանքերով այսօր Էջմիածինը վերակենդանացած է, այսօր Էջմիածինը ոչ թե միայն հայրենիքի մեջ ապրող հայ ժողովուրդի հոգեկան սնունդ կուտա, այլ նաև աշխարհի բոլոր տարածքին վրա ցրված հայերուն՝ գաղթական հայերուն հոգեկան ուժ կուտա գոյատևելու, ապրելու իբրև հայեր, իբրև հայ քրիստոնյաներ: Հայ Եկեղեցին այսօր ևս, ըլլա, հայրենիքին մեջ, ըլլա արտասահմանի տարածքին իր առաքելությունը կշարունակե:

Մեզմե ամեն մեկը, իբրև հոգևորական, իբրև եկեղեցական, իբրև դաստիարակ, մայր ու հայր՝ առաքելության գործ ունի: Պետք է մեր հավատքը մեր ժողովուրդին հավատքը փոխանցենք մեր ապա-

գա սերունդին, մեր զավակներուն: Անոնց հոգիին մեջ պետք է վերակենդանացնենք քրիստոնեության հավատքը, Լուսավորչի հավատքը և այն ատեն է, որ մենք ևս իբր քրիստոնյաներ, հայ քրիստոնյաներ մեր առաքելությունը կատարած կըլլանք: Մենք բոլորս միատեղ այսօր աղոթենք, որպեսզի Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը շարունակե իր առաքելությունը, իր հայկական, իր հայ քրիստոնեական առաքելության սուրբ գործը: Եվ աղոթենք, որպեսզի Տերը անսասան պահե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Ասված մեր ժողովուրդեն հեռու պահե ամեն տեսակ դժբախտություններ: Եվ Ասված աշխարհին տա խաղաղություն, մարդոց մեջ հաստատե խաղաղության, եղբայրության ոգին, որպեսզի մարդիկ, համայն աշխարհ ապրի խաղաղ կյանք մը, և մենք այդ խաղաղ կյանքին մաս կազմենք իբրև հայեր, իբրև Հայ Եկեղեցվո զավակներ և միշտ բարեբանենք անուն Սուրբ Երրորդության հավիտյանս հավիտենից. ամեն: